

**ԳԱՆՁԱՍԱՐԻ 1714 ԹՎԻ ԳԱՐՏՆԻ ԺՈՂՈՎԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Հայոց պետականության իրավական և սահմանադրական զարգացումը՝ պայմանավորված բնականոն երևույթներով, հնագույն ժամանակներից խարսխված է եղել բնիկ օրենքների վրա:

Մովսես Խորենացին Հայկազունների գահավորության մասին գրել է. «բնիկ մախնույ սերունդք ի թագաւորութեան հասանեն յաստիճան», «ինձ այսոքիկ արք ի մերոց թագաւորաց են սիրելիք, որպէս բնիկք և իմոյ արեան առուք և հաւաստի հարազատք», «զմերս ազգի ածից զկարգ թագաւորացն, զի մերոյ աշխարհիս բնիկք պսակաւորք արք այնոքիկ, զորոց զանուանսն ի ներքոյ դրոշմեսցուք»¹: Հայոց «բուն բարքերը» հիշատակել է նաև Ազաթանգեղոսը²:

Հայոց պատմության ընթացքում ստեղծվել են ներքին և արտաքին հարաբերություններին վերաբերող վավերագրեր, որոնց բնույթը և բովանդակությունը պայմանավորված էր երկրի քաղաքական և սոցիալական վիճակով ու աշխարհաքաղաքական ընթացքով:

Հազարամյակների խորքից եկող Մեծ Հայքի թագավորության սահմանադրական ավանդույթները, ներառվելով կանոնական իրավունքում տեղ գտած դրույթների շրջանակի մեջ,³ շարունակվեցին նաև հայ Արշակունիների քաղաքական ասպարեզից հեռանալուց (428 թ.) հետո: Հայոց Արևելից կողմերում վերականգնված Հայոց թագավորությունը օրենսդրական ճանապարհով ամրացնելու գաղափարով, Հայկազունի-Սիսակեան Առանշահիկ տոհմից սերած Վաչագան Բարե-

¹ Մովսես Խորենացի, էջ 65-67:

² Ազաթանգեղոս, 839:

³ Կանոնագիրք Հայոց, Ա, աշխատ. Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964:

պաշտ արքան, ըստ Մովսես Կաղանկատվացու, ստեղծեց «Սահմանադրութիւն կանոնական»-ը¹: Այն ընդունվեց Աղուեմի կանոնադիր ժողովում որպէս Հայոց թագավորության գրավոր Սահմանադրություն, որին պատմագիտության մեջ իրավացիորեն մեծ տեղ է տրվել²: Հայ ժողովրդի կյանքում Հայ եկեղեցին պատմական հանգամանքներով դեկավար դիրքում էր, ուստի սահմանադրական նորմերը, ընդգրկելով աշխարհիկ ոլորտներ, շեշտադրվում էին եկեղացական կանոնադրությամբ և լույս աշխարհ եկան Հայոց կաթողիկոս Հովհաննես Օձնեցու «Կանոնագիրք Հայոցը», Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» և Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը», իրենցով նշանավորելով Հայոց վաղ միջնադարի և հետագա՝ Բագրատունյաց և Կիլիկիայի հայկական պետության ժամանակների սահմանադրական զարգացումները:

18-րդ դ., երբ օրակարգի հարց էր դարձել Հայոց աշխարհը թուրք-պարսկական լծից ազատագրման խնդիրը, հայ սահմանադրական մտքի արտահայտություններն եղան Գանձասարի 1714 թ. գաղտնի ժողովի *Որոշումը* և 1773 թ. Հակոբ Շահամիրյանի «Որոգայթ փառացը»՝ ապագա անկախ Հայկական Հանրապետության Սահմանադրությունը, որը ոգով համահունչ էր Գանձասարի ժողովի Որոշմանը: «Որոգայթ փառացը» հռչակում էր. «Միաբան եղիցի ժառանգութիւն ազգին Հայոց... և պահպանեսցի տունն Հայոց ըստ Օրինօքն Հայաստանեայց մինչև յաւիտեան: ...Ամենայն բնութիւն մարդոյ ծնեալ ի յերեսս երկրին Հայաստանեաց ունի պատիւ անուանիլ զինքն Հայ... Պատուելի մեզ է սովորութիւնն Աստուածպաշտութեան Հայաստանեաց սուրբ եկեղեցւոյն. . .»³:

«Որոգայթ փառացը» գրվել է հայրենիքից հեռու, որպէս Հայաստանի ապագա Սահմանադրություն, իսկ 1714 թ. *Որոշումը* ազատագրական պայքարի ընդերքում ստեղծված սահմանադրական փաստաթուղթ էր: *Որոշումը* ներկայացված է Ապրես Բեկնազարյանցի անունով

¹ Մովսես Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի: Քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 89-94:

² Բ. Ուլուբաբյան. Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Երևան, 1981, էջ 174: Կիմ Ղահրամանյան, Վլադիմիր Հովհաննիսյան. 1500-ամյա Հայկական Սահմանադրությունը. Ընդունման հանգամանքները և նշանակությունը, Երևան, 1999, էջ 17:

³ Գիրք անուանեալ Որոգայթ փառաց, շարադրեցեալ Յակոբայ Շահամիրեանց (1773), Թիֆլիս, 1913, էջ 140-142:

հայտնի «Գաղտնիք Ղարաբաղի» երկուն, որի հեղինակն իրականում Մակար Բարխուտարյանցն է¹: *Որոշման* առանցքումն է Արցախի նշանակությունը հայ ժողովրդի ազատագրական պայքարում:

Նախկինում՝ Հայոց ամբողջական պետության գոյության ժամանակաշրջանում, այսպես կոչված «դաշնակիցը» լինում էր հակամարտող տերություններից մեկը և համապետական կամ առանձին նախարարական խմբավորումների քաղաքական կողմնորոշումը բխում էր միջպետական հարաբերությունների բնույթից, իսկ 17-րդ դարի վերջերից և հետագայում՝ քաղաքական դաշնակիցների փնտրտուքի և դրանով իսկ՝ քաղաքական կողմնորոշման աշխարհագրությունը խիստ ընդլայնվեց: Սկսեց մշակվել օտարի օգնությամբ և հովանավորությամբ նվաճող տերություններից ազատագրվելու և Հայկական պետությունը վերականգնելու անպտուղ տեսությունը: Մինևույն ժամանակ, ավելի քան հինգ հազարամեայ փորձով՝ սեփական ուժին ապավինելու Հայկյան ազատատենչ ոգին անմար էր և հայ քաղաքական մտքի համոզմունքն էր, որ հայրենիքը օտարի լծից կարելի է ազատագրել միայն զենքի ուժով: Սակայն, աշխարհաքաղաքական վիճակի թելադրանքով սեփական ուժին ապավինելու հրամայականին գումարվել էր օտարի միջոցով ազատագրվելու պատրանքը: 18-րդ դ. հայ իրականության մեջ մշակվող ազատագրական պայքարի հետագա ընթացքը կանխորոշվում էր սեփական ուժին ապավինելու և օտարից օգնություն ստանալու

¹ Քննելով «Գաղտնիք Ղարաբաղի» երկի մասին նյութերը, Պավել Չոբանյանը գրել է. «Գիտակցելով Արցախի պատմության խոր ուսումնասիրության և ազատագրական շարժումների հանգամանալից նկարագրության անհրաժեշտությունը և ոգևորված Բաֆֆու դեռևս 1882 թ. «Մշակում» տպագրված «խամսայի մելիքությունները» աշխատության թողած մեծ տպավորությամբ ու նաև հենվելով վերջինիս վրա, Մակար Բարխուտարյանցը 1886 թ. Ապրես Բեկնազարյանցի անունով հրատարակում է «Գաղտնիք Ղարաբաղի» աշխատությունը... Աշխատության քննադատությամբ հանդես են եկել Բաֆֆին և Լեոն... Մ. Բարխուտարեանցը 1888 թ. հանդես է եկել «Քննադատություն քննադատությանց» վերնագրով գրքույկով, որտեղ շրջանցելով «Գաղտնիք Ղարաբաղի»-ի հեղինակի հարցը և մեկ առ մեկ պատասխանելով Լեոյի առարկություններին (Լեո. Վե՛պ, թէ պատմութիւն (Ղարաբաղի անցեալը Ապրես Բեկնազարեանցի գրչի տակ), Շուշի, 1887, էջ 3-4), գրեթէ անխտիր պաշտպանում է «Գաղտնիք Ղարաբաղում» շարադրուած դրոյթները...: Մակար Բարխուտարյանցը... միանգամայն վստահ է նրանում նկարագրված իրադարձությունների ճշգրտությանը, արտատպել է որոշ խոշոր հատվածներ իր «Պատմութիւն Աղուանից» աշխատության մեջ... » (տես՝ «Աղուանից երկիր եւ դրացիք. Արցախ» հատորը կազմեց Պաւել Չոբանեանը, Երևան, 1999, էջ 8):

հույսի միախառնման քաղաքականությամբ:

Օտարի վրա հույս դնելը համարելով ստրկամտություն և, արտահայտելով սեփական ուժին ապավինելու գաղափարը, «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի հեղինակը գրել է. «Օտարը միշտ օտար է. օտարն ունի միշտ իւր կեղծ քաղաքականութիւնը... Օտարներից օգուտ սպասելն յիմարութիւն է: Ամեն կառավարութիւն ունի իր քաղաքական շահերը եւ միշտ ձգտում է յօգուտ իւր ընդլայնել այդ շահերը... Աւելի լաւ է որ մենք մեր յոյսը մեր վերայ դնենք, մեր ոյժերը միացնենք եւ միացեալ ոյժով կարգի դնենք մեր գործերը... Սնտոի յոյսերով այլոց դրանց առջեւ դեգերելն անօգուտ ժամավաճառութիւն է»¹:

Ինչպէս դիպուկ նշել է Րաֆֆին, Գանձասարի վանքի «Չայոց ժողովի» մեջ էին հայ մելիքները և հոգևորականները հավաքվում խորհրդի: Մեծ գրողը հատուկ ընդգծել է այդ ժողովների կարևորությունը. «Իրենց դիտաւորութիւնների մասին խորհելու եւ կարգադրութիւններ անելու համար գաղտնի ժողովներ էին կազմում Գանձասարի վանքում, նոյն ժամանակուայ Եսայի կաթողիկոսի նախագահութեամբ»²:

Չայոց ապստամբության նախաշեմին, Գանձասարում՝ Եսայի կաթողիկոսի հրավիրած ժողովին, ըստ «Գաղտնիք Ղարաբաղի», մասնակցում էին Խաչենի մելիք Գրիգոր Ջալալյանը,³ Գյուլիստանի Մելիք-Յովսեփ Մելիք-Աբովյանցը, Վարանդի մելիք Յուսեյն Ա, Ջրաբերդի մելիք Եսայի Մելիք-Չայկազյանցը և Դիզակի մելիք Ավան Բ: Մասնակիցների մեջ էին նաև մելիքազուններ, զորավարներ, եպիսկոպոսներ, ավագերեցներ և գյուղապետներ: Գանձասարի ժողովի ընդունած *Որոշման* առաջին տասը կանոնները վերաբերում էին հայության միասնու-

¹ «Գաղտնիք Ղարաբաղի», էջ 42-43, 48:

² **Րաֆֆի**. Երկերի ժողովածու, հ. 9, Խամսայի մելիքութիւնները, Երեւան, 1987, էջ 430-433:

³ Րաֆֆին գրել է. «Մուլքի բէկը վախճանուեցաւ 1716 թուին եւ թողեց երկու որդի, երեքը կոչուում էր մելիք Գրիգոր, կրտսերը կոչուում էր մելիք Ալլահվերդի: Մելիք Գրիգորը խելացի, ճարտարախօս մարդ էր... Ջանազան քաջագործութիւններից յետոյ նա հեռացաւ աշխարհից եւ, մտնելով Գանձասարի վանքը, վարդապետ ձեռնադրուեց: Մելիք Գրիգորից յետոյ նրա եղբայր մելիք Ալլահվերդին վարեց Խաչենի իշխանութիւնը, իսկ այդ վերջինի մահից յետոյ՝ իր որդի Մելիք բէկը, որը ութն որդիներ թողեց: Նրա որդիներից մէկն էր Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսը... » (Նույն տեղում, էջ 427):

թյան պահպանության գաղափարով՝ Ս. Էջմիածնի¹ շուրջ համախմբմամբ կաթողիկոսական աթոռակալությանը, ուսյալ հոգևորականներով եպիսկոպոսական վիճակների համալրմանը և վանականության ներքին կյանքին:

«Ա. Աղուանից (այսինքն Գանձասարի) կաթողիկոսն կ'ընտրուի ժողովրդեան ազատ իրաւունքով եւ կը հաստատուի Ս. Էջմիածնի կաթողիկոսի կոնդակով:

Բ. Աղուանից կաթողիկոսն, ըստ դարաւոր սովորութեան, պէտք է հպատակի Էջմիածնի կամքին, հայութեան միութեան կապը պահպանելու համար:

Գ. Եթէ Ջալալեան տոհմի եպիսկոպոսներից եւ ազգից չգտնուի արժանաւորագոյն կաթողիկոսացու, դրսից ընտրելու է:

Դ. Որդիաբար հնազանդիլ Աղուանից կաթողիկոսին եւ սիրով ընդունիլ նորա հոգեւոր կարգադրութիւնները:

Ե. Իւրաքանչիւր մելիքի գաւառի վիճակաւոր եպիսկոպոսն կամ վարդապետն կ'ընտրուի տեղական ժողովրդից եւ մելիքից, եւ սոցա վկայաթղթով հանրագութեամբ կը ներկայացուի Աղուանից կաթողիկոսին:

Զ. Ամեն վիճակաւոր եպիսկոպոս իրաւունք ունի ձեռնամուխ լինել միայն իւր վիճակի կարգադրութեան եւ ոչ այլոց թէ՛ ձեռնադրութեամբ եւ թէ՛ որելիցէ գործերով:

Է. Եթէ ամեն գաւառում հարկաւոր են վարդապետ, քահանայ, սարկաւազ եւ դպիր՝ վիճակաւոր եպիսկոպոսներն նախ պարտաւոր են գրով կանխաւ զեկուցանել Աղուանից կաթողիկոսին եւ ապա ձեռնադրել նորա հրամանաւ:

Ը. Ամեն եպիսկոպոս պէտք է հոգայ իւր վիճակի եւ իւր վանքի լուսաւորութեան եւ որչափ կարելի է ձեռնադրել ուսեալները եւ ոչ թէ տգէտները:

Թ. Վանահայրերի ընտրութիւնն կախուած է միաբանութիւններից եւ Աղուանից կաթողիկոսի հաստատութիւնից:

Ժ. Յանցաւոր եպիսկոպոսների պատիժներն կախուած են կաթողիկոսից, իսկ միաբան վարդապետաց, սարկաւազաց եւ դպրացն՝ վանա-

¹ Ամենայն Հայոց կաթողիկոս Աղեքսանդր Ա Ջուղայեցի (1706-1714) սատարում էր Եսայի կաթողիկոսին:

հայր եպիսկոպոսներից, եւ քահանաներինն՝ վիճակաւոր եպիսկոպոսից. բայց այս ամենն զգուշաւոր քննութիւններից վերջն»:

Հաջորդ կանոնախումբը վերաբերում էր Ջալալյանների գահերեցութեամբ Գանձասարը՝ պատերազմական իրավիճակով թելադրված պատասխանատվության բարձրացմամբ, որպէս ազատագրական պայքարի ռազմավարության կենտրոնի և մելիքական զինվորական կանոնների հաստատմանը.

ԺԱ. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է գահերէց ճանաչել Ջալալեան մելիքները եւ թէ՛ յայտնի եւ թէ՛ գաղտնի ժողովատեղի ընդունիլ Գանձասարի վանքը: Ամեն զօրավար հնազանդելու է իւր մելիքի հրամանին, ամեն գնդապետ իւր զօրավարին եւ ամեն զօրական իւր գնդապետին եւն:

ԺԲ. Իւրաքանչիւր մելիք պարտաւորուած կը լինի պահել Վ (3000) կանոնաւոր զօրք, փորձառու զօրավար, հաւատարիմ սուրհանդակներ եւ պատրաստութիւններ:

ԺԳ. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է արթուն հսկել իւր սահմաններին, եւ եթէ վտանգ կը նշմարէ թշնամեաց կողմից, անմիջապէս պէտք է հաղորդէ միւսներին:

ԺԴ. Իւրաքանչիւր մելիք, եթէ կը յանդգնի իւր գաւառի որոշեալ սահմաններից դուրս գալ եւ ուրիշ մելիքների իրաւունքը բռնի յափշտակել՝ կը պատժուի միւսների (մելիքների) ժողովով որոշած պատժով եւ ժՌ (10. 000) թուման տուգանք կը տուժէ մելիքաց (ընդհանուր) գանձարանին եւ կը տուժէ առանձին՝ վնասուած մելիքի վնասը:

ԺԵ. Ամեն ոք (մելիք) պարտաւոր է ամրապնդած պահպանել ներքին սիրոյ եւ միաբանութեան կապը, միաձոյլ զօրութեամբ արտաքնոց դէմ կռուելու:

ԺԶ. Մեծ կամ փոքր պատերազմներն կը մղուին բոլոր մելիքների, զօրավարների եւ գնդապետների որոշելուց յետոյ: Անակնկալ կամ յանկարծակի դէպքերն բացառութիւն կը լինին:

Հատուկ կանոնով ռազմական օրենքի ուժ էր տրվում հայրենիքի և եկեղեցու հանդէպ կատարվող հանցանքի պատժի սահմանմանը, վավերացումը թողնելով հոգևորականներից և մելիքներից կազմված ատյանին:

ԺԷ. Հայրենեաց եւ կրօնի դէմ դաւաճանութիւն եւ ծանր յանցանք գործողն, թէ՛ մելիք լինի, թէ՛ զինուորական եւ թէ՛ ժողովրդական, կը

պատժուի կրօնական եւ մեղիքական խառն ժողովոյ որոշած պատժով:

Ընտանիքը համարվում էր երկրի կայունութեան երաշխիքը.

ԻԱ. Մեղիքներից ով որ կը յանդգնի, իւր օրինաւոր ամուսնոյն վերայ, ուրիշ ապօրինի կին պահել, հասարակութեան տալ վատ օրինակ եւ զայթակղութիւն եւ թշնամանել եկեղեցւոյ օրէնքը՝ այնպիսին անխնայ կը պատժուի արդար վրէժխնդրութեամբ:

Ամուսնութիւնը թույլ էր տրվում ազգային պատկանելութեան սահմաններում՝ արտաքինից եկող որեւէ միջամտութիւն կասեցնելու հրամայականով.

ԺԸ. Ո՛չ այլազգի իշխանաւորաց հետ խնամութիւն հաստատել եւ ո՛չ երկպառակութեամբ նոցա յարիլ:

Տասնիններորդ կանոնով, չէր բացառվում, անհրաժեշտութեան դեպքում արտաքին ուժերի հետ համագործակցութիւնը, սակայն միայն սահմանադրական ատյանի կողմից վավերացվելուց հետո.

ԺԹ. Եթէ օժանդակութեան համար զօրեղ տէրութեան դիմելու հարկն զգալի լինի՝ կրօնական եւ աշխարհական խառն ժողովով որոշելու է առաջարկելի պայմանները եւ պահանջները:

Քսաներորդ կանոնով Հայրենյաց շահը սահմանվում էր բարձրագոյն արժեք, որը բոլորն անխտիր պետք է գիտակցեին:

Ի. Իւրաքանչիւր մեղիք պարտաւոր է Հայրենեաց ընդհանուր շահերը իւր գաւառի շահերից վեր դասել եւ իւր գաւառի շահերը իւր անձնական շահերից եւ օգուտներից:

22-րդ կանոնով յուրաքանչյուր մեղիքից պահանջվում էր, որ պատերազմի ժամանակ ինքը անձամբ գլխավորեր իր զորքը:

Վերջում սահմանվում էին *Որոշման* մեջ ամրագրված կանոնները խախտողների նկատմամբ կիրառելիք պատիժները.

ԻԳ. Մեզանից ով որ կը յանդգնի սոյն կանոններին հակառակը գործել, Հայրենեաց եւ կրօնի թշնամու կողմն անցնիլ, նորա հետ միաբանելով Հայրենեաց հանգստութիւնը վրդովել, հայը հայի դէմ թշնամի յարուցանել եւ արիւնահեղութիւն պատճառել՝ այնպիսին մահուան պատժով կը պատժուի, միւս մեղիքներն կը գրաւեն նորա բերդը եւ ինչքը ցնոր տնօրէնութիւն»:

Ժողովից հետո մասնակիցները ստորագրում են բնագիրը և արտագրված հինգ օրինակները, որոնցից մի մի օրինակ մեղիքները վերցնում են իրենց հետ, համբուրում են Գանձասարի Ս. Յովհաննէս

Մկրտիչ Եկեղեցու Ս. քենը և գնում են իրենց կալվածքները¹:

Հայրենյաց արժեքների գիտակցման հրամայականով՝ Հայրենիքը պաշտպանելու և առաջիկա պայքարում համախմբվելու վճռականությամբ Գանձասարում 1714 թ. հրավիրված գաղտնի ժողովի *Որոշումը* կարևոր ներդրում է Հայոց ազատագրական ծրագրերի մշակման և սահմանադրական մտքի պատմության մեջ:

¹ «Գաղտնիք Ղարաբաղի», էջ 210-214: